ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 15–20-ին Երևանում կայացավ հայագիտական միջազգային համաժողով՝ «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» խորագրով: Հրավիրվել էին 250 արտասահմանցի հայագետներ, որին արձագանքել էին 140-ը: Հայաստան էին ժամանել 88-ը՝ 14 ուղեկիցներով, արտասահմանյան 25 երկրներից: Ընդհանուր թվով, համաժողովին մասնակցեցին 400 հայագետներ՝ պատմաբաններ, բանասերներ, մշակութաբաններ և հայոց եկեղեցու սպասավորներ:

Համաժողովը բացվեց սեպտեմբերի 15-ին՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մեծ դահլիճում: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը նշեց, որ համաժողովը կոչված է համախմբել Հայաստանի, սփյուռքի և արտասահմանյան հայագետներին, ամրապնդել և գործնական դարձնել նրանց համագործակցությունը: Դա հնարավոր է դարձել մեր անկախ պետականության վերականգնման շնորհիվ, որը թույլ է տալիս գիտական հարցերը քննել առանց քաղաքականացման ու կուսակցականացման: Իսկ այսօրվա հայագետների առջև գրված են հարցեր, որոնք անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի ծագման, ազգային ինքնորոշման պահպանման, հայոց պետության ու եկեղեցու, սոցիալ-տնտեսական համակարգի, նոր պայմաններում ազգային ինքնագիտակցության ձևավորման, ազգային-ազատագրական պայքարի և այլ հիմնախնդիրների հետ, մասնավորապես ասաց Ֆ. Սարգսյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ուղերձ էր հղել ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը: «Ողջունում եմ Հայագիտական առաջին միջազգային համաժողովի մասնակիցներին և հյուրերին,– ասված էր ուղերձում:– Այս գիտաժողովը նշանակալի իրադարձություն է մեր երկրի հասարակական կյանքում: Հայաստանի անկախացումից ի վեր առաջին անգամ է հրավիրվում նման միջազգային ընդգրկում և ներկայացուցչական կազմ ունեցող համաժողով: Օրինաչափ է, որ համաժողովը տեղի է ունենում Երևանում, որը պետք է լինի ոչ միայն անկախ Հայաստանի, այլև հայագիտության մայրաքաղաք:

Ուրախ եմ, որ գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը ստանձնել են այս կարևոր միջոցառման կազմակերպման շնորհակալ գործը: Ողջունելի է, որ համաժողովին մասնակցում են մեծ թվով օտարերկրյա հայագետներ: Մենք նրանց ընդունում ենք որպես Հայնրիխ Հյուբշմանի, Անտուան Մեյեի և մյուս մեծ հայագետների գործի արժանի հետևորդների: Սա վկայում է, որ հայագիտությունը շարունակում է մնալ միջազգային գիտական մտքի կարևոր ուղղություններից մեկը:

Հուսով եմ համաժողովը հնարավորություն կտա մեկտեղելու ջանքերը և, ի թիվս դիտական խնդիրների, նաև մշակելու հայագիտության զար-

գացման ծրագիր: Պետությունը կարող է իր աջակցությունը բերել այդ ծրագրի իրականացման աշխատանքներին:

Հայագիտական միջազգային համաժողովին մաղթում եմ բարի երթ, գիտնականներին բեղմնավոր գիտական գործունեություն»:

Այնուհետև հայրապետական իր օրհնությունը հայագետներին հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն բարի ընթացք մաղթելով համաժողովի աշխատանքներին: Ընթերցվեց նաև Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի հայրապետական օրհնանքի խոսքը: Համաժողովի հովանավորներից Ռուսաստանի հայերի միության նախագահ Ա. Աբրահամյանը ևս ողջունեց հայ և արտասահմանցի հայագետներին բարձր գնահատելով նման ընդգրկուն համաժողով կազմակերպելու ՀՀ ԳԱԱ-ի և Երևանի պետհամալսարանի այս նախաձեռնությունը: Համաժողովի մասնակիցներին ողջունեցին նաև ՀՀ ԱԺ կրթության, գիտության, երիտասարդության հարցերի և սպորտի մշտական հանձնաժողովի նախագահ Հ. Հակոբյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանը:

Համաժողովի լիագումար նիստում զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը և Լոս Անջելեսի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռ. Հովհաննիսյանը (ԱՄՆ):

«Հայագիտության արդի վիճակը Հայաստանում և զարգացման հեռանկարները» զեկուցման մեջ Վ. Բարխուդարյանը հանգամանորեն անդրադարձավ հայագիտական մտքի զարգացման ընթացքին, հայագիտության բոլոր ճյուղերին պատմություն, բանասիրություն, մշակույթի և դրանց ենթաճյուղերի մասին, անդրադարձավ նաև դրանց զարգացման հեռանկարներին (զեկուցումը հանգամանորեն տե՛ս «Պատմա-բանասիրական հանդեսի» ներկա համարում):

Ռ. Հովհաննիսյանն արտասահմանում հայագիտության արդի վիճակի և զարդացման հեռանկարների մասին զեկուցման մեջ նշելով, որ թեև վերջին չորանում հայագիտությունն ակնառու հնչեղություն է ձեռք բերել և այդ ասպարեզում զգալի առաջընթաց է արձանագրվել, այնուամենայնիվ ասաց, որ հարկ է լրջորեն մտածել հետագա անելիքների մասին: Զեկուցողը նկատեց, որ անհրաժեշտ է Արևմուտքում մշակված մոդելի հիման վրա կենտրոն ստեղծել, որը կարող է միավորել «սարբեր բաժիններում և ֆակուլտետներում առկա հետազոտական և ուսումնական պաշտոնները կազմելով հայագիտության համապարփակ ծրագիր»: Նաև «հայագիտության բնագավառի գիտնականների համար, անկախ այն բանից նրանց կրթությունը հայկական է, թե ոչ և արդյոք նրանք հետաքրքրվում են Հայաստանի ներկայիս քաղաքական խնդիրներով, թե ոչ, շատ կարևոր է հայկական պատմամշակութային փորձը համաշխարհային պատմության և մարդկային հավաքական հիշողության մաս դարձնելը»:

Լիագումար նիստի ավարտից հետո համաժողովի մասնակիցներն իրենց աշխատանքը շարունակեցին չորս մասնաճյուղերում պատմության, բանասիրության, մշակույթի և «Հայոց եկեղեցին և հայագիտությունը»:

Սեպտեմբերի 20-ին Երևանի պետական համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ համաժողովի լիագումար եզրափակիչ նիստը, որտեղ

ամփոփվեցին 4 մասնաճյուղերի և 9 ենթամասնաճյուղերի, ինչպես նաև 3 կլոր սեղանների աշխատանքների արդյունքները:

Պատմության մասնաճյուղի ղեկավար, հանձնաժողովի անդամ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը նշեց, որ մասնաճյուղում ընթերցված 26 զեկուցումներն ունեին երկու ուղղություն. մի մասը վերաբերում էր հայ ժողովրդի պատմության զանազան հարցերի, մյուսները քննության էին առնում հայագիտության վիճակն ու խնդիրները: Քննարկումները ցույց տվեցին, ասաց Վ. Բարխուդարյանը, որ բավական աշխատանք կա կատարելու և՛ աղբյուրագիտության, և՛ ժողովրդագրության և պատմության այլ հիմնահարցերի հետազոտման ասպարեզում: Նա անդրադարձավ ամերիկյան պատմագրության վերաբերյալ Հայաստանում եղած քննադատական վերաբերմունքին, նշեց, որ դա հետևանք է տեղեկատվության պակասի: Հայտնեց նաև, որ վիճելի հարցերը քննարկելու համար առաջիկայում կանցկացվեն առանձին քննարկումներ:

Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Եղիազարյանը ներկայացրեց բանասիրության մասնաճյուղում կատարված աշխատանքը, նշեց, որ լսվել է 39 զեկուցում, որից 17-ը՝ արտասահմանցի հայագետների կողմից: Հատկապես հրատապ է համարվել հայ գրականության նոր պատմության ստեղծման անհրաժեշտությունը, որն ավելի տեսական ընդհանրացումներ կանի, հայ գրականությունը կդիտարկի համաշխարհային գրականության հենքի վրա, և դրանում իր կարևոր տեղը կգրավի սփյուռքահայ գրականությունը: Լեզվաբանների ուշադրության կենտրոնում հիմնականում եղել են հայոց լեզվի արդի զարգացումները և արևմտահայ ու արևելահայ ճյուղերի հարաբերության խնդիրը: Հայոց լեզվի երկու ուղղագրությունների խնդիրը բուռն վեճերի և քննարկումների է արժանացել, ուստի հարկ է հրավիրել հատուկ համաժողով և քննարկել ուղղագրության խնդիրները: Բոլոր պարագաներում չպետք է սրել այդ հարցը, այլ սառեցնել, թույլ տալ, որ ժամանակն ինքը թելադրի բնականոն լուծումները:

Մշակույթի մասնաճյուղի աշխատանքները ամփոփեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Արևշատյանը: Նա ասաց, որ ընթերցվել է 60 զեկուցում մշակույթի 46 տարբեր ճյուղերի ներկայացուցիչների կողմից, կարևորեց նեղ մասնագիտական ուղղություններով հաճախակի կազմակերպվելիք համաժողովների նշանակությունը, հայագիտական ուսումնասիրությունների համար մրցանակներ սահմանելը: Ապա անդրադարձավ մասնաճյուղի եզրափակիչ նիստում արձանագրված ձեռքբերումներին՝ բնագրերի հրատարակություն, մենագրական աշխատանքներ, որոնք, ըստ նրա, արգյունք են գաղափարական կապանքներից ձերբազատվելուն:

«Հայոց եկեղեցին և հայագիտությունը» մասնաճյուղի աշխատանքներն ամփոփեց Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը: Գնահատելով համաժողովն իբրև լավ կազմակերպված միջոցառում, նա միաժամանակ գոհունակություն հայտնեց հայոց եկեղեցու նման համաժողովին առաջին անդամ ներկայացված լինելու առթիվ:

Մասնաճյուղերի աշխատանքներն ամփոփելիս, ելույթ ունեցողները նշեցին նաև մի շարք թերություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել

նմանատիպ միջոցառումներ կազմակերպելիս: Նախ, որ չափից ավելի էր այն զեկուցողների թիվը, որոնք, ըստ էության, որևէ նորություն չէին հաղորդում և դրանցում ոչ մի հիմնախնդիր էլ առաջ չէր քաշվում: Տարակուսանք էր առաջացրել նաև համաժողովում թարգմանչի բացակայությունը:

Այնուհետև հանդես եկան կլոր սեղանների ղեկավարները: «Հայաստանը տարածաշրջանային զարգացումների համակարգում», «Հայկական ինքնության խնդիրը և հայապահպան գործունեությունը սփյուռքում» և «Կրթության հիմնախնդիրները սփյուռքում և Հայաստանում» թեմաներով կայացած կլոր սեղանների մասին հաղորդումներով հանդես եկան պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Պողոս Լևոն Զեքիյանը և կրթական բարեփոխումների կենտրոնի տնօրեն Վ. Մարտիրոսյանը:

Եզրափակիչ նիստում ելույթ ունեցավ նաև ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանը: Նա մասնավորապես վստահեցրեց համաժողովի մասնակիցներին, որ պետությունը պետք է ձգտի իրականացնել հայագետների բարձրացրած հարցերը, խոստացավ ուշադրության կենտրոնում պահել սփյուռքի կրթական օջախների հիմնախնդիրները, հայապահպանության խնդիրները:

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը: Նա ասաց, որ համաժողովի խորհուրդը ստացել է 18 դիտողություն և առաջարկություն: Դրանց այն մասը, որն ուղղված է հայագիտության ընդհանուր վիճակը բարելավելուն, աշխատանքները ճիշտ կազմակերպելուն, հաշվի է առնվել: Այնուհետև նա ընթերցեց համաժողովի ընդունելիք բանաձևը, ըստ որի որոշվեց հայագիտական համաժողովը դարձնել ավանդական՝ 3 տարին մեկ պարբերականությամբ, Հայաստանում ստեղծել հայագիտական միջազգային կենտրոն՝ սփյուռքում ունենալով մասնաճյուղեր, հիմնադրել հայագետների համաշխարհային ընկերակցություն, սփյուռքի և Հայաստանյան գործարարների օգնությամբ ստեղծել Հայագիտության զարգացման հիմնադրամ, հրատարակել հայագիտական տեղեկատվական պարբերական: Դրանք իրագործելու համար առաջարկվեց կազմել հանձնախումբ:

Գիտաժողովի համանախագահ, Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը հանդես եկավ եզրափակիչ խոսքով՝ շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, հաջողություն մաղթեց նրանց և հույս հայտնեց, որ համաժողովը կնպաստի նոր ծրագրերի ստեղծմանը: Նա հավաստիացրեց, որ գիտաժողովի զեկուցումները կհրատարակվեն առանձին գրքով:

Համաժողովի մասնակիցները եղան Երևանի տեսարժան վայրերում, մասնակցեցին մշակութային միջոցառումների: Համաժողովի աշխատանքները լայնորեն լուսաբանվեցին զանգվածային լրատվության միջոցներով: